

**Համաձայնեցված է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան**

04 հոկտեմբեր 2012 թ.

12 սեպտեմբեր 2012 թ. N 24

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 24**

**SMS ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԴԵՊԲԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԻ ԲԶՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԵՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ «հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա հանձնակատարի կամ գործակալի կողմից մատուցվող ծառայությունների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում համապատասխանաբար՝ հանձնակատարին, գործակալին հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կամ գործակալի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը՝ առանց ԱԱՀ-ի), իսկ հանձնարարողի, պրինցիպալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում հանձնարարության կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի»:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի հանձնարարության և գործակալության պայմանագրերին վերաբերող դրույթները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 14.12.2011թ. N 1 պաշտոնական պարզաբանման բովանդակությունը՝ պաշտոնապես պարզաբանում եմ.

SMS հաղորդագրությունների միջոցով վիճակախաղի կազմակերպման դեպքում, եթե՝

1) SMS հաղորդագրությունների միջոցով վիճակախաղի կազմակերպչի և բջջային կապի օպերատորի միջև կնքված՝ հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալական պայմանագրի հիման վրա, որով որպես հանձնարարող կամ պրինցիպալ հանդես է գալիս վիճակախաղի կազմակերպիչը, իսկ որպես հանձնակատար կամ գործակալ՝ բջջային կապի օպերատորը,

2) գործարքի պայմանները փաստացի համապատասխանում են հանձնարարության կամ գործակալության պայմանագրի օրենքով սահմանված պայմաններին,

3) ըստ վիճակախաղի կազմակերպչի և բջջային կապի օպերատորի միջև կնքված պայմանագրի՝ քաղաքացու ուղարկած SMS հաղորդագրության հիման վրա բջջային կապի օպերատորը քաղաքացուց գանձում է (գանձման է ներկայացնում) վիճակախաղի կազմակերպման պայմաններով սահմանված՝ SMS հաղորդագրության միջոցով կազմակերպվող վիճակախաղին մասնակցության ամբողջ արժեքը, ապա բջջային կապի օպերատորի կողմից վիճակախաղի կազմակերպչին մատուցվող ծառայության ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, կհամարվի բջջային կապի օպերատորի կողմից կազմակերպչից գանձված (գանձման ենթակա) գումարի այն մասը, որը հանձնարարության կամ գործակալության պայմանագրով ենթակա է վճարման բջջային կապի օպերատորին՝ որպես մատուցված ծառայության դիմաց հատուցում (վարձատրություն), եթե «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ: